

ՍԻՐԱՆ ՍԵԶԱՅԻ «ԼԱՄԱԿԱՆԻ» Ա. ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Posted on April 2, 2024 by Keghart



Category: [Opinions](#)



Լրատու, Լոս Անճելըս, 7 մարտ 2024

Հայաստանեայց Առաքելական եկեղեցույ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի «Չուարթնոց» Մշակութային յանձնախումբի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Սիրան Սեզայի «Նամականի»ի Ա. հատորի շնորհանդեսը՝ Չորեքշաբթի, 6 Մարտ 2024-ին, Առաջնորդարանի «Համբար» սրահին մէջ՝ ի ներկայութեան գրասէր հասարակութեան մը: Բացման խօսքով հանդես եկաւ յանձնախումբի ատենապետ Տոքթ. Սիմոն Սիմոնեան, որ շեշտեց ազգային մշակոյթի կարեւորութիւնը հայապահպանման գործին մէջ: Ան ընդգծեց նաեւ Սեզայի ներդրումը հայ կանանց իրաւունքներու պաշտպանութեան համընդհանուր ճիգերուն մէջ:

Օրուան հանդիսավարուհի, ուսուցչուհի եւ հետազօտող Տիկ. Սեւան Տէր Պետրոսեան ամփոփ կերպով խօսեցաւ Սեզայի եւ անոր դերին մասին եւ ապա հրաւիրեց օրուան զեկուցաբերը՝ երկարամեայ ուսուցիչ, դաստիարակ եւ բանասէր Դոկտ. Մինաս Գոճայեանը: Վերջինս իր հանրամատչելի բանախօսութեան մէջ ներկայացուց Սեզայի համառօտ կենսագրութիւնն ու դերը ոչ միայն հայ կանանց այլեւ առհասարակ Միջին Արեւելքի կանանց իրաւունքներու պաշտպանութեան մէջ ունեցած կարեւոր ներդրումին մասին: Այնուհետեւ Դոկտ. Մ. Գոճայեան հանգամանօրէն անդրադարձաւ «Նամականի»ի ազգային-հասարակական եւ գրական ակնառու արժանիքներուն մասին: «Պատմութեան հետազօտողը շատ տեղեկութիւններ եւ կարեւոր մանրամասնութիւններու պիտի ծանօթանայ յետ-եղեռնեան շրջանի հայ սփիւռքը յուզող հարցերու շուրջ», - ըսաւ ան եւ ապա ընդգծեց գրական-գեղարուեստական արժանիքները այն նամակներուն, որոնք փոխանակուած են Սեզայի, Անդրանիկ Ծառուկեանի եւ Վահէ-Վահեանի միջեւ: Բանախօսը յատուկ կերպով ընդգծեց նաեւ հատորի պատրաստութեան մէջ մեծ բժախնդրութեամբ աշխատած բանասէր եւ պատմաբան Գեորգ Եազըճեանի վիթխարի աշխատանքը:

«Նամականի»էն հատուածներ ընթերցեց Տիկ. Նազելի Գոճայեան, նոյնպէս երկարամեայ ուսուցչուհի հայոց լեզուի եւ գրականութեան: Ընտրուած էին Ծառուկեանէն, Վահէ-Վահեանէն եւ Սեզայէն երեք նամակներ, որոնց գեղարուեստական մատուցումը խորապէս տպաւորեց ներկաները:

Գեղարուեստական բաժնին մէջ դաշնակարուհի Տիկ. Արմինէ Չաքարեան նուագեց



Շնորհանդեսը նվիրված է Սեզայի ամենէն սրտամօտ երաժիշտը, իսկ Կոմիտասը տակաւին Պոլիս գտնուած տարիներուն հաճոյքով հետեւած է աշակերտուհի Սիրանի ասմունքին եւ քաջալերած է զինք:

Խօսք առաւ նաեւ Սիրան Սեզայի որդին՝ Վահագն Քիւփեւեան, որ իր շնորհակալութիւնը յայտնեց սոյն ձեռնարկը կազմակերպած «Չուարթնոց» յանձնախումբին եւ Առաջնորդ Սրբազան Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, որ հովանաւորած ու ներկայ գտնուած էր շնորհանդեսին: Վահագն Քիւփեւեան իր եւ կնոջ՝ քանդակագործ Անիի անունէն իր շնորհակալութիւնը յայտնեց գեղարուեստական յայտագրի մասնակիցներուն: Ան յուշ մըն ալ պատմեց թէ ինչպէս իր մայրը անձնապէս եւ արհաբար միջամտած էր Լիբանանի կառավարութեան մօտ, որպէսզի անյապաղ կերպով լիբանանեան բանակը հեռացնէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքէն (Անթիլիաս, Լիբանան), ուր բողոքի եկած էին հայ կանայք ընդդէմ այն ուժերուն, որոնք կը փորձէին գրաւել Սիսի կաթողիկոսութիւնը:

Յայտագրի աւարտին խօսք առաւ Առաջնորդ Սրբազան հայրը, որ բարձր մակարդակի սոյս հանդիսութիւնը գնահատելու կողքին նշեց հայ մտաւորականութեան սերտ գործակցութեան պարագան, որուն փայլուն օրինակներէն մէկն էր Սեզա (Սիրան Չարիֆեան-Քիւփեւեան) , Ճառուկեան, Վահէ-Վահեան, Վազգէն Շուշանեան գրագետներու սրտցաւ համագործակցութիւնը:

~~Հիւրասիրութեան բաժնին մէջ ներկաները առիթ ունեցան ծանօթանալու~~

«Նամականի»ին եւ նուիրատուութեան մը դիմաց ունենալու գիրքէն: Որոշուած է
ամբողջ հասոյթը տրամադրել Արցախէն տեհահանուածներուն:

There are no comments yet.